ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

15.07.2011թ.

Արմավիրի մարզի Դաշտ համայնքում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունն առավել թափանցիկ և հրապարակային դարձնելու և տեղական ժողովրդավարությունն ամրապնդելու նպատակով 2011թ. առաջին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ ներկայացնում եմ հաշվետվություն Դաշտի գյուղական համայնքի բնակչությանը:

Արմավիրի մարզի Դաշտի գյուղական համայնքն ունի մոտ 1100 բնակիչ այդ թվում նաև ժամանակավոր բնակվող անձինք,որոնցից հիմնական մասը զբաղվում է գյուղատնտեսական աշխատանքներով,իսկ գյուղատնտեսական աշխատանքով՝ բնակչության մոտ 10%:

Համայնքը գազաֆիկացված է մոտ 90%-ով,իսկ մնացած 10%-ի համար այսպես կազմվում է նախագիծ առաջիկայում ամբողջովին գազաֆիկացնելու համար: Ոռոգման ջրի մատակարարման հետ կապված խնդիրներ չկան: Խմելու ջրի ջրամատակարարումը շուրջօրյա է:

Բյուջեի եկամտային հատվածի սեփական եկամտային մասը
/ առանց դոտացիայի/ կատարվել է հետևյալ ցուցանիշներով՝

1. հողի հարկ՝	1 705.3 հդ .	– 675.2հդ.	- 39.6 % -ով,
2. գույքահարկ՝	445.2հդ.	- 259.9հդ.	- 58.4 % -ով.
3. վարձակալական հողի հարկ	150.0հդ.	- 130.2հդ.	- 86.8 % -ով,
4. տեղական տուրք	61.0հդ.	- 24.9հդ.	- 40.8 % -ով,
5. տեղ.վճար	20.0հդ.	- 10.0հդ.	---------- :

--- աշխատակազմին վճարվել է աշխատավարձ --- 3 848.0հդ,
սոց.վճար՝ --- 823.3 հդ.:

--- տրամադրվել է սոց.օգնություն՝ --- 100.0հդ./կարկտահարված համայնքներին/

--- «Հայրենականչ» թերթին բաժանորդագրության գումար է փոխանցվել 48.0 հդ..

--- «Հայֆերմեր» թերթին բաժանորդագրության գումար է փոխանցվել --- 10.0հդ.,

--- աշխատակազմի գործուղման համար ծախսվել է --- 100.0հդ.,

--- ջրմուղ կոյուղուն է փոխանցվել --- 20.0 հդ.,

--- էլեկրաէներգիայի ապառքին փոխանցվել է --- 142.1հդ.,

--- գրասենյակային ապրանքների ձեռք բերման համար՝ --- 40.0հդ.,

--- աղբահանության համար --- 120.0հդ.,

--- միջոցառումների համար --- 500.0հդ.,

--- «Ֆուլեր տնաշինական կենտրոն» ԲՀԿ --- 300.0հդ.,

--- համակարգչային ծառայություն --- 8.8հդ.,

--- կապի ծառայություն --- 54.0հդ.,

---- տեղեկատվական ծառայություն --- 65.0հդ.:

2011թ. ընթացքում կայացել է ավագանու 3 նիստ:

--- համայնքի ազգաբնակչությանն է տրամադրվել 280 տարբեր բովանդակությամբ տեղեկանքներ,

--- Մուտք է եղել 60 պաշտոնական գրություն,որոնք քննարկվել են և որոնց ընթացք է տրվել,

--- Ելք է եղել 52 պաշտոնական գրություն,

--- Մուտք է եղել 11 դիմում,

--- Ընդունվել է համայնքի ղեկավարի 1 որոշում,

--- Արձակվել է համայնքի ղեկավարի 7 կարգադրություն,

--- Ամսեկան հաշվետվությունները ժամանակին է ներկայացվել մարզպետարան, սոցիալական ծառայություն և վիճակագրական վարչություն:

2011թ-ի առաջին կիսամյակի ընթացքում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

Գյուղապետարանը առանձնակի ուշադրություն է դարձրել բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը:

Իսկ ընդհանուր առմամբ համայնքի անապահով ընտանիքներին,համայնքի ղեկավարը օգնություն է ցուցաբերել իր սեփական միջոցների հաշվին, ինչես նաև չի անտեսվել համայնքում սգո արարողությունները:

Փետրվար ամսին՝ Դաշտ համայնքի խաչքարի մոտ, «Տյառնընդառաջ» քրիստոնեական տոնի կապակցությամբ կատարվեց միջոցառում՝ հյուրասիրությունով, քահանայի և նվագախմբի մասնակցությամբ, իսկ համայնքի 13 նորապսակ զույգեր հանդիսավոր պայմաններում գյուղապետարանի միջոցներից նվեր ստացան ոսկե մատանիներ: Մարտի 8-ի կապակցությամբ համայնքի միջնակարգ դպրոցում կազմակերպվել է միջոցառում՝ հյուրասիրությունով:

Համայնքում յուրաքանչյուր ամսվա՝ 10,20,30-ին իրականացվում է աղբահանություն:

Համայնքի կենտրոնական հրապարակը,որտեղ կան նորատունկ ծառեր և տեղադրված է խաչքարը, պարբերաբար ոռոգվում և խնամվում են գյուղապետարանի աշխատողների կողմից:

Համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ համայնքի բնակիչներին ապառիկ կարգով տրամադրվել է թունաքիմիկատներ, սերմացու և հեղուկ՝ կենսաբանական պարարտանյութ:

Մեծ Հաղթանակի կապակցությամբ համայնքում կազմակերպվել է միջոցառում, հյուրասիրություն և բացօթյա համերգ՝ համայնքի բնակիչների համար:

Այժմ էլ իրականացվում են ակտիվ աշխատանքներ Դաշտ համայնքի ավագանու և Աշխատակազմի կողմից Դաշտի գյուղական համայնքի զարգացման համար:

ԴԱՇՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆ